

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

## ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՆԱՐԵԿԱՅՈՒ ԵՎ ԴՈՍՏՈՆՎՍԿՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երբ խոսվում է գրական առնչությունների մասին, ակամա հարց է առաջանում՝ հնարավոր է քննության առնել ինչ հարյուր տարվա հետալորությունից միմյանց «ձայնակցող» երկու հսկաների՝ Նարեկացու և Դոստոևսկու ստեղծագործություններում արտահայտված հիմնախնդիրների մասնությունն ու զուգակշռի վրա դնել դրանցում ներկայացված գաղափարները: Եթե ընդունում ենք նրանց ապրած դարաշրջանների և հասարակական կացութաձևերի արմատական տարբերությունը, որն, իհարկե, անառարկելի է, ապա չպետք է մոռանանք նաև այն, որ անվերջ շարժման մեջ գտնվող կյանքի ու հասարակական հարաբերությունների փոփոխվող հոլովություն մարդու էությունը հիմնականում մնացել է նույնը: Ուստի զարմանալի չպետք է թվա տարբեր ժամանակներում ու տարբեր պայմաններում ստեղծագործած երկու գրական մեծությունների հայացքների ու գաղափարների ընդհանրությունը, որը գալիս է նրանց որդեգրած մարդասիրական էությունից և մարդու կատարելագործման ու հասարակական կյանքի բարելավմանը նպաստելու ազնիվ ձրգտումից:

Նարեկացու ապրած դարաշրջանը բարդ էր ու հակասական: Ժողովուրդը գտնվում էր սոցիալական ու քաղաքական դժվարին կացության մեջ, բարվոք չէր նաև Հայաստանի արտաքին քաղաքական վիճակը: Նարեկացին տեսնում էր, որ Վասպուրականի թագավորությունն աստիճանաբար գնում է դեպի անկում, միաժամանակ ուժեղանում էր բյուզանդական և մահմեդական տարբեր իշխանությունների ճնշումը:

Աղոթքի միջոցով Նարեկացին ձգտում էր արտահայտել մարդու հոգեկան աշխարհի ողջ խորությունը, միաժամանակ ցույց տալ իր սերը առ Աստված և մեղքերից ազատվելու ճանապարհը: Հենց դրա շնորհիվ էլ «Մատյան ողբերգության» պոեմը դառնում է «կենաց դեղ», տառապանքի միջոցով ճշմարտության որոնման Աղոթամատյան: Ուրեմն անվարան կարող ենք ասել, որ Նարեկացու «Մատյանը» ժամանակի իրականության ընդհանրացված և ճշմարտացի ու խոր արտացոլումն է:

Ծանր ու դժվարին էր նաև Դոստոևսկու ապրած դարաշրջանը:

Ռուսաստանի սոցիալ-քաղաքական կացութաձևը բռնադատում էր մարդու ազատությունն ու իրավունքը, ծնում զանազան տիպի մակաբույծներ: Նման արատավոր իրականության մեջ հասարակական հարաբերություններն ազդում էին մարդու հոգեկան աշխարհի վրա, երկփեղկում նրան, Լերմոնտովի խոսքերով ասած՝ երկիրը դարձնում «տերերի ու ստրուկների անվա Ռուսաստան»: Դոստոևսկին աշխարհը համարում էր մի հսկա ռազմադաշտ, ուր ահագնորեն բախվում են մարդկային կրքերը, հասարակական կարգերն ու

բազմազան իրարամերժ տեսությունները: Այդ է պատճառը, որ նա խորապես արտահայտեց իր ատելությունը հասարակության այնպիսի կառուցվածքի հանդեպ, ուր բռնակարգ ստեղծած իշխանությունները խել էին ժողովրդի ազատությունը:

Իրականության մեջ չտեսնելով իրենց երազանքի կատարումը, և՛ Նարեկացին, և՛ Դոստոևսկին ապրում են խոր հիասթափություն և ստեղծում ողբերգական պատկերներ: Ընդհատ կլիմայի ասել, որ երկու մեծերը միմյանց լրացնում են իրենց տառապանքներով, ճշմարտության որոնումով և ինքնախարազանմամբ: Ընդգծելով հանդերձ նրանց ստեղծագործությունների թեմատիկ ու ժանրային որոշակի տարբերությունները, միաժամանակ շեշտում ենք, որ երկուսն էլ խորապես տառապել են ընդհանուր մարդկության համար և ներկայացրել մարդու ներաշխարհի մակընթացությունն ու տեղատվությունը, այն «ներքին պայքարը», որ բնորոշ է բանական արարածին:

Պատկերելով իրականության ցավոտ կողմերը, Նարեկացին ամբողջ էությամբ զգում է աշխարհի ցավն ու անկատարությունը, միաժամանակ ներկայացնում հակասություններից բզկտվող անհատի երկվությունը:

Նա ոչ թե «ընկերակցում է բարձրացածների», այլ՝ «տեսքը ծիծաղկոտ, աչքը ողբի մեջ» գտնվող «լքվածներին ու խորտակվածներին»:

Նարեկացու աշխարհայացքի բուն էությունը մարդասիրությունն է: Որպես վերածնության գաղափարների մեծագույն արտահայտիչ, Նարեկացին խիստ կարևորում էր մարդուն և նրա հոգեկան ու մտավոր անսպառ կարողությունները, սակայն իրական կյանքում չէր տեսնում իր երազանքի կատարումը և սուսկափար տանջվում էր այն մտքից, որ բանականությամբ օժտված մարդն ընկել է իր բարձույնից, դարձել ատող, ստող, խոստացող ու չկատարող, երկդիմի ու մորթապաշտ: Բանաստեղծի ձգտումն է մարդուն վերադարձնել իր նախնական վիճակին, վերահաստատել նրա հոգու և էության ներդաշնակությունը: Նարեկացին երազում է տեսնել Աստծո կատարյալ տիպարին ձգտող մարդուն: Չէ՞ որ, ըստ Նարեկացու, «իմանալի ոգին» խիղճն է, որին ոչնչով զայթակղել հնարավոր չէ, քանի որ նա բացարձակ ճշմարիտ էություն է, մարդու գոյության ռեալ հատկանիշը, նրա արարքների անվերել չափանիշը:

Մաքրագործված մարդու իդեալական կերպարի որոնումներով, եվրոպական վերածնության դարաշրջանից դեռևս շատ առաջ Նարեկացին արտահայտում էր մարդասիրական վեճ գաղափարներ, շարունակում էր և նոր ուժով բացահայտում հնագույն ժամանակներից ի վեր կատարյալին հասնելու մարդու երազանքը: Նրան խորապես ցավ է պատճառում մարդկային հոգու թուլությունը, բանական գոյի սխալ ըմթացքը, «տիրադավ իշխանների» նյութապաշտությունը: Այդ է պատճառը, որ «Մատյանը» լի է լույսի ու խավարի, ծիծաղի ու լացի, բողոքի ու հառաչանքի, ցավի ու զղջման պատկերներով, որոնց պատճառով էլ մարդը երևում է հակասությունների մեջ, երկփեղկված վիճակում:

Այժմ իսկ զգում եմ արդեն անձիս մեջ

Տագնապախտով ալեկոծումներ ներհակ ուժերի,

Եվ չար ու բարի խորհուրդներն ահա խմբված բազմությամբ,

Սպառազինված զենք ու սուսերով՝

Բախվում եմ իրար ոտխների պես...

/Բան Ա-բ/

Ինչպես Նարեկացին, Դոստոևսկին ևս տեսնում էր կործանվածների, ճնշվածների տառապանքները, որոնց համար կյանքը դարձել էր խորթ մայր: «Կարամազով եղբայրներ» վեպում Իվան Կարամազովը, խոսելով աշխարհի անկատարության մասին, հիմնավորում է իր ժխտական վերաբերմունքը մարդկանց ու աշխարհի մասին: Նա գտնվում է հոգեկան երկվության մեջ. «... թեկուզ և մարդկային հիասթափության բոլոր սարսափները հարվածեն գլխիս, - մեկ է՝ այնուամենայնիվ ես կուզեմամ ապրել...»<sup>1</sup>: Նա ապրում է հենց այս երկվության ողբերգությունը և ձգտում հաղթահարել այն, սակայն անկարող է, որովհետև չի հավատում երջանկության հնարավորությանը:

Դոստոևսկու ստեղծագործություններում կարևոր տեղ է գրավում խղճի և կյանքի փոխհարաբերության պրոբլեմը: Նա ասում է, որ ամբողջ համաշխարհային գրականությունը պայքար է Աստծո և սատանայի միջև, իսկ ճակատամարտի վայրը մարդկային հոգին է: Սատանան Իվանին ասում է, որ մարդիկ հետզհետե ավելի շատ են տառապում մի յուրօրինակ հիվանդությամբ, որ կոչվում է ներքին բարոյական տառապանք, խղճի խայթ: Սատանայի հեգնանքն ուղղված է «բարքերի մեղմացման» դեմ: «Է՛հ ո՞վ շահեց, - ասում է նա, - շահեցին միայն անխիղճները, որովհետև նրանց համար ի՞նչ է որ խղճի խայթը, երբ հենց խիղճ ասավածը չունեն բոլորովին: Բայց տուժեցին կանոնավոր մարդիկ, որոնց մեջ դեռ մնում է խիղճն ու պատիվը...»<sup>2</sup>:

Եթե Իվանը /«Կարամազով եղբայրներ»/ և Ռասկոլնիկովը /«Ոճիր և պատիժ»/ անվերջ տառապում են «սիրտը կրծող ճիրանավոր զագանից»՝ խղճի խայթից, ճշանակում է նրանց մեջ դեռ չի մտնել բարին ու մարդկայինը, ճշանակում է նրանց ներաշխարհում երկվության պայքարը դեռ չի ավարտվել ու նրանց չի դարձրել ամբողջականությամբ օժտված արարածներ: Այնինչ, երբ նրանց համեմատում ենք իշխան Վալկովսկու հետ /«Ստորացվածներ և անարգվածներ»/, տեսնում ենք նրանց միջև եղած մեծ տարբերությունը: Ստոր և ցինիկ Վալկովսկին հակամարդկային իր արարքներով անկայացված է ամբողջական գծերով. նրա հոգեկան աշխարհից բացակայում է խիղճն ու խղճմտանքը: «Ես խղճի խայթ չեմ ունեցել, - ասում է նա, - ես համաձայն եմ ամեն ինչի, միայն թե ինձ համար լավ լինի»<sup>3</sup>:

Դոստոևսկին խորապես ու բազմակողմամիտորեն բացահայտեց իր հերոսների հոգևոր աշխարհը, ցույց տվեց խղճի և բանականության միջև առաջացող անջրպետը, լայնահուն ճանապարհ բացեց դեպի մարդկային հոգու խորքերը և անսահմանորեն ընդլայնեց մարդու պատկերացումները շրջապատող աշխարհի մասին:

Դոստոևսկու ստեղծագործությունների գլխավոր հերոսը մարդկային խիղճն է, և դա բխում էր նրա էությունից, հոգու բարությունից: Անցնելով տառապանքի ուղիներով, նա մարդկային մտքի և խղճի ձայնով ազդարարում էր իր բողոքը «Աստծո ստեղծած աշխարհ»

<sup>1</sup> Փ. Դ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, հ. I, Ե., «Սովկուսկան գրող», 1983 թ., էջ 325:

<sup>2</sup> Նույնը, հ. II, Ե., «Սովկուսկան գրող», 1984 թ., էջ 440:

<sup>3</sup> Փ. Մ. Достоевский, Собр. соч. в 15-ти т., т. 4, Л., 1989 г., стр. 245.

հի» դեմ, ուր մարդը մարդուն գալլ է, ուր ամենի երեխան անգամ ազատ չէ տառապանքից: «... Գազանը,- գրել է Դոստոևսկին,- երբեք չի կարող այնքան դաժան լինել, որքան մարդը, այնպես արտիստաբար, այնպես զեղարվեստորեն՝ դաժան»<sup>4</sup>: Եթե մարդն այնքան առողջ է,- առում է Դոստոևսկին,- որ նրան չի տանջում ուրիշ մարդկանց տառապանքը, նշանակում է՝ նա հիվանդ է:

Նարեկացին համարելով խորաթափանցությամբ տեսնում էր հասարակական կյանքի չարիքները /«Մեղքերս բացվել են ու բազմապատկվել»/, երկրի վրա ծանրացած անիրավությունը, մարդկային անչափելի արատներն ու սխալները, և նրա խոռվահույզ հոգին տանջվում էր այդ ամենից.

... Ընեզ բանասրկում ցնծում է ուրախ.  
Թախծում է գունդը հրեշտակների,  
Սատանան՝ պարում լիրբ հոհոցոցով.  
Ողբերի մեջ է զորքը վերնական,  
Ստորինները բերկրում են զվարթ...

/Բան Դ-ա/

Խորենացու մեծ Նարեկացին դատապարտում էր հասարակական կյանքի «խտորընթացքը», ուր չէր մնացել ոչ մի մաքուր անկյուն, խորապես ընկալում և բացահայտում էր այն անչափելի հակասությունը, որ գոյություն ուներ արգահատելի իրականության և իր երազների միջև.

Անպատրաստ մարտիկ, Ընեզավոր զինվոր,  
Ցոփ սպառազեն, թուլամորթ մշակ,  
...Ջելս վաճառական, շվայտ, շահարար,  
Արբշիտ պաշտոնյա, խարդախ զանձապետ...

/Բան ԾԶ-բ/

Նկատի ունենալով, որ մարդն իր ծննդյան օրից մտնում է տառապանքների լաբիրինթոսը, նաև այն, որ կյանքն իր բազմազան վայրիվերումներով ինքնին դառնում է «տանջանքների հովիտ», Նարեկացին պոեմի բազմաթիվ գլուխներում անընդհատ շոշափում էր այդ հարցը, նկարագրում մարդու ֆիզիկական ու հոգեկան դառնակակիծ հառաչանքները: Նարեկացու հերոսն իրեն անխնա կեղեքում է ոչ միայն անձնական վշտի համար, այլև մտահոգված է ուրիշների ցավով: Նրա կարծիքով զերադասելի էր լույս աշխարհ չգալ, հասակ առնել ու աճել կամ էլ օժտվել բանականությամբ՝

Քան թե ենթարկվել այսքան սաստկագույն  
Ու սարսափելի տառապանքների,

<sup>4</sup> Ծ. Մ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, հ. I, Ե., «Սովետական գրող», 1983 թ., էջ 337:

Որոնց դիմամալ կարծրակոփ ժայռերն անգամ չեն կարող,  
Ո՞ր մնաց տկար մարմինները լուծ:

/Բան Դ-բ/

Արշակ Չոպանյանը մշտն է, թե Նարեկացին կարծես սիրել է իր տառապանքները, քանզի «տեսանելի է տառապանքը՝ բոլոր այդ էջերում մեջ, որ մույն մտածման բազմակուտակ կրկնությունները տիրական գաղափարեն ճողոպրելու անկարելիությունը կմտնեն»<sup>5</sup>:

Հուսահատության ցավն է, որ բազում տանջանքների է մղում բանաստեղծին, և մա դիմում է մարդ էակի չափազանցված կերպար բնութագրմանը՝ մրան համարելով «հավետ մեղապարտ», և մրա անօրենությունն ու հանցավոր մեղքերը հասցնում տիեզերական չափանիշների:

Դոստոևսկու հերոսները ևս «սիրել են տառապանքը», անցել մրա քարքարոտ ուղիներով, գուցե դրանով ձգտել քավել իրենց մեղքերը. «...մեզանից ամեն ոք, - ասում է վանահայրը, - անտարակույս, մեղավոր է այս երկրի վրա բոլորի և ամեն ինչի համար, ոչ միայն աշխարհի համայնական մեղքի հետևանքով, այլև ամեն ոք անձնապես մեղավոր է ամբողջ մարդկության և յուրաքանչյուր մարդու համար»<sup>6</sup>:

Ե՛վ Նարեկացին, և՛ Դոստոևսկին մերկայացնում են այն տառապալիներին, ովքեր մարմնավորում են ոչ միայն իրենց անձնական վիշտը, այլև ընդհանուր մարդկության ողբերգությունը: Դրանով էլ մրանց ստեղծագործությունները դառնում են համաշխարհային թախծի արտահայտություն:

Խորապես, մույնիսկ հիվանդագին կերպով արձագանքելով աշխարհի հակասություններին, իր վաղ շրջանի գործերից մեկում՝ «Նմանակը» վիպակում, Դոստոևսկին գլխավոր հերոս Գոլյադկինի միջոցով տալիս է ժամանակի իրականության ռեալ, ամսխիթար պատկերը: Վերջինս ցավով է շեշտում, որ սրիկաներն ու պորտաբուծներն ավելի լավ են ապրում և հեշտությամբ են ազատվում դժվարություններից, իսկ կյանքը կարծես ավելի բարեհաճ է այդպիսիների նկատմամբ:

Այս մտայնությունը մշտապես տանջել է Դոստոևսկուն, և մա իր ստեղծագործությունների կարևոր հարցերից մեկը դարձրել է հենց այդ՝ ինչո՞ւ սրիկաներն ավելի հեշտ են ապրում, տոկուն ու կենսունակ են, քան արդարներն ու ազնիվները: Գրողի մպատակն է՝ պաշտպան կանգնել խեղճերին ու ոտնահարվածներին և երջանկացնել մրանց: Նա չէր կարող և գուցե չէր ցանկանում շրջապատող իրականությունն ընդունել իր անչափելի հակասություններով և տեսնել այն խոր անդունդը, որ գոյություն ուներ «ստորացվածների, անարգվածների» և կյանքի «շալակը բարձրացած» տգրուկների միջև:

«Ցավով մարդու համար»՝ այսպես է անվանել Դոբրոլյուբովը Դոստոևսկու «Ստորացվածներ և անարգվածներ» վեպը, որի հերոսներից մեկը՝ Իշխան Վակուլսկին, առանց խղճի խայթի, ցնիկորեն է վերաբերվում ազնիվ սրտի տեր մարդկանց, իր կնոջն ու հարազատ երեխաներին: Գրողը ցավով է արձագանքում, որ պետք է կործանել այն աշխարհը, ուր անպատիժ ապրում և հաղթանակ են տանում մրա մեծաները:

<sup>5</sup> Ա. Չոպանյան, Ե., «Սովևրական գրող», 1988 թ., էջ 308:

<sup>6</sup> Ֆ. Մ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, հ. I, Ե., «Սովևրական գրող», 1983 թ., էջ 232:

Բարոյական ոչ մի նորմ գոյություն չունի Վալկովսկու համար, անձնական շահը բարձր է ամեն ինչից, և նա հաճում այդ շահի թալանում է կնոջն ու աղջկան՝ լքելով նրանց, թողնելով հետին աղքատության մեջ:

Խորապես ողբալով մարդկային տառապանքները, Դոստոևսկին հավատում էր կյանքի դրական վերափոխումներին և իր ողջ կյանքը մկիրեց համընդհանուր երջանկության գաղափարին: Այլոջայի բերանով /«Կարամազով եղբայրներ»/ նա իր սրտի խոսքն է ուղղում հաճախ մարդկությանը. «... վերջապես ճշմարտությունն է հաստատվելու երկրի վրա, և բոլորը սուրբ են լինելու, սիրելու են իրար, չի լինելու ո՛չ հարուստ, ո՛չ աղքատ, ո՛չ բարձրացյալ, ո՛չ ստորացյալ, այլ բոլորը լինելու են Աստծո գավակների մեջ, և գալու է իսկական թագավորությունը Քրիստոսի»<sup>7</sup>:

Նարեկացին և Դոստոևսկին մոտ են իրար նաև ճշմարտության որոնման ձգտումով և ինքնախարազամամբ:

Եթե Դոստոևսկու հերոսները բարձրանում են դեպի աստվածային կատարելություն և իջնում են միմյև գազանի աստիճան՝ ձգտելով իրենց մեջ գտնել մարդուն, ապա Նարեկացին պոեմի սկզբից միմյև վերջ աղերսանքով է դիմում Աստծուն, մարդու մեջ որոնում կատարյալն ու աստվածայինը՝ ցանկանալով նրանում բնակեցված տեսնել Աստծուն /«Բնակվիր իմ մեջ և միացիր ինձ»/:

Նարեկացու Մատյանի քնարական հերոսը անվերջ որոնման մեջ գտնվող և կատարելության ձգտող մարդն է, որ պայքարում է ոգու ներդաշնակության համար: Բանաստեղծը ցանկանում է տեսնել թերություններից ու արատներից մաքրված և իր մաքրությամբ աստվածացող մարդուն, որն այդ ճանապարհով պիտի միանա ու միաձուլվի «առաելության անհասանելի» աստվածային էությանը: Աբեղյանը գրում է, թե Նարեկացու մպատակն է՝ պատկերել «մարդն Աստծու մեջ և Աստված ինքը՝ մարդու մեջ»:

Այդպիսի երազանք ունի նաև Դոստոևսկու հերոսներից մեկը՝ Իվան Կարամազովը: «Մարդը կբարձրանա աստվածային, տիտանական հպարտության ոգով, և կհայտնվի մարդ-Աստվածը... մարդը այնպիսի՝ բարձր մի հաճույք պիտի զգա ամեն ժամ, որ դա պիտի փոխարինի երկնային հաճույքներ վայելելու բոլոր մախկին հույսերը...»<sup>8</sup>, - ասում է նա:

Վկայակոչելով չարի փորձությունները կրած Հոբին, Նարեկացին շեշտում է, որ այժմ իր դրությունը Հոբից ավելի վատթար է, ուստի խնդրում է Աստծուն՝ ցույց տալ գլխության ու ողորմության լույսը, որպեսզի ինքն ստանա «և՛ կյանք, և՛ երանություն»՝ քավությամբ հանդերձ:

Դոստոևսկին ասում էր, որ մեծ մարդիկ աշխարհում պետք է մեծ թախիծ զգան: Իսկապես, մեծ մարդիկ, այսինքն՝ խղճով ու խղճմտանքով հարուստ և հոգեպես հզոր մարդիկ խորապես զգում են իրենց շուրջ կատարվող դեպքերի ու գործողությունների ներքին իմաստը և «մեծ թախիծ» են ապրում անարդարությունների պատճառով: Նարեկացին և Դոստոևսկին իրենց ստեղծագործություններում արտահայտել են մարդկային կրքերի առավել սուր և ծայրահեղ բախումները: Նրանց հերոսներն իրենց պատասխանատու են

<sup>7</sup> Նույնը, էջ 43-44:

<sup>8</sup> Նույնը, հ. II, Ե., «Սովկոական գրող», 1984 թ., էջ 448:

զգում աշխարհի և մարդու անկատարության համար, ծառանում են այն ամենի դեմ, ինչը մարդու մեջ ավաստացնում է մարդուն:

Խղճի ահավոր տառապանքն է Ռասկոլնիկովին տանում դեպի դժոխք, իսկ Նարեկացին՝ անբեկյացնում է Աստծո «երկայնամիտ կամքի լույսի» մերքո մրա ստեղծած արարած-ների ապաշաղկապը:

Քանզի մարդկանցից այն ո՛վ մեղանչեց՝ ու չապրեց զղջում,

Ո՛վ ապականվեց՝ ու չպատկանեց...

Անօրինացավ՝ ու չկոշկոճեց խիղճը քարերով,

Իր մեծության մեջ տեսավ ստրուկին՝ ու չկսկծաց,

Չարիքներ գործեց՝ չեղավ ինքնամեծ,

... Ո՛վ մտաբերեց իր արարքները՝ ու չխարշատվեց:

/Բան ԻԹ-բ/

Նարեկացին խորապես ափսոսում է, որ մարդը, իմանալով հանդերձ կյանքի ճշմարտությունն ու գոյության իմաստը, դարձյալ տարվում է իրեն հոգեպես կործանող խաբուսիկ արարքներով և մեղանչում արդարության ու ճշմարտության դեմ, ուստի խորհուրդ է տալիս իմանալ ոչ միայն ճշմարտությունը, այլև հավատալ, սիրել և ուժ ստանալ և ապրել ճշմարիտ կյանքով: Եթե մարդ իր կյանքը կառուցում է միայն սեփական շահերի օգտի համար, ապա դա տանում է դեպի մեղսագործություն, ծնում ողբերգություն: Այդ է պատճառը, որ «Ողբահեծ սրտի խոր հառաչանքից» ծնվում են «բանական գոյի սխալ ընթացքը»՝ դատապարտող բազմաթիվ ու բազմաբնույթ տողեր, ուր երևում են բանաստեղծի ծիծաղն ու լացը, ցավն ու զղջումը, բողոքն ու հառաչանքը, հուսախաբությունն ու հավատը:

Նարեկացին միաժամանակ համոզված է, որ մարդու մեջ եղած չարի ձգտումը ոչ թե մարդկային բնույթից է, այլ սկզբնական գոյից մրա մեջ պահպանված բնագոյի արդյունք, գոյության կովի սովորույթ, ուստի իր ապրած կյանքի ընթացքում մարդը պետք է կարողանա հաղթահարել այդ բնագոյները, հաշվի մատել իր խղճի հետ, չստել, չկեղծել, ինքնավերլուծմամբ դուրս գալ ճգնաժամից:

Ընդհանրապես ճգնաժամային իրավիճակը մարդկային հոգիներում առաջացնում է կրքերի անսահման բախում ու փոթորիկ, ծանր դրությունից դուրս գալու հուսախաբ որոնում, տառապալից ապրումներ:

Դոստոևսկու հերոսները ևս հաճախ են ընկնում մեծ վիճակի մեջ: Նրանք բախվում են ոչ միայն տարբեր դեպքերի շուրջ, այլև բախումը տեղի է ունենում մրանց մերսում, որ առավել տանջալից է և սուր: Իսկ Նարեկացին կամ մրա բանաստեղծական հերոսը, որ երբեմն հանդես է գալիս երկրորդ կամ երրորդ դեմքով, անմիջական կապի մեջ մտնելով Երկնավորի հետ, երևում է երկփեղկված վիճակում և «բացվում» ընթերցողի առաջ իր հոգու ամենամուրբ ծալքերով: Երբեմն էլ բանաստեղծի երկրորդ եսը մրա թշնամին է, հակոտնյան, դատավորն ու դատապարտյալը: Նարեկացին ձգտում է դրանց միացնել, ամբողջացնել, սակայն իզուր, որովհետև՝

Կոչում ենք՝ ու չենք սոսկում ապշահար...  
 Տարագրվում ենք՝ ու չենք տագնապում...  
 Կամելով գնալ ավելի ուժգին՝ թաղվեցի սաստիկ,  
 Անչափիմ միտված՝ իմիմ չհասա,  
 Բարձրագույններին ձգտելով անդուլ՝  
 Նախկին տեղիցս էլ զահավիժեցի,  
 Երկնային ուղուց անդունդներ ընկա...  
 /Բան ԾԵ-Գ/

Նարեկացու ստեղծագործության կարևոր առանձնահատկություններից մեկը սկզբից մինչև վերջ ծավալվող զգացմունքայնությունն է, որ հախտում կերպով բխում է՝ սփռելով տանջահար մարդու սրտից ելնող աղեխարշ ճնշումները: Կրկնությունները, որ այնքան բնորոշ են քերթողին, նպատակ ունեն մարդկային զգացումը բոլորամպեր արտահայտելու բուն տեմը, բաղձամբը: Ինչպես գրում է Ա. Չոպանյանը, Նարեկացուն բնորոշ են զգացմունքի անկեղծությունը և արտահայտության անկախությունը. «Իր բացատրությունը բացարձակն է, գերագույն վեհությունն է, երբ ուզե Աստծո մեծությունը երգել... Իր երևակայությունը երագողի, տեսանողի երևակայություն է, որում մեջ անհունը ձևեր կառնե, անծանոթը տեսանելի կդառնա, տեսիլքը իրականության շրջագծերով կնկարվի»<sup>9</sup>:

Նույնաման երևույթ՝ նկատվում է նաև Դոստոևսկու մոտ: Նրա հերոսները, չնչին բացառությամբ, հակված են դեպի զգացմունքների ու կրքերի ծայրահեղ դրսևորումները՝ ձգտելով հասնել հնարավոր սահմանին, լիակատարության: Այդ զգացմունքայնությամբ գրողը ցանկանում է բացահայտել մարդկային տառապանքների, կրքերի ու ապրումների չբացահայտված խորքերը: Պատկերելով թշվառների ու ստորագվածների մի շարք կերպարներ, Դոստոևսկին վեր է հանում կյանքի հատակում ընկածների վարքագիծը, ճշմարտության հասնելու նրանց ձգտումը:

Դոստոևսկու համոզմամբ, աշխարհի կատարելիության մեջ ամենակարևոր դերակատարը Քրիստոսն է, որովհետև Նա է բարոյի և գթության խորհրդանիշը, Փրկիչը: Գրողի ստեղծագործություններում հաճախ ենք հանդիպում այնպիսի պատկերների, երբ հերոսները, մտահոգված հասարակական կյանքի ու մարդկանց վիճակի բարելավմամբ, դիմում են Աստծոն՝ աղերսելով ողորմածություն: «Տ՛եր, ողորմյա բոլորին,- ասում է Ալյոշան,- պահպանիր նրանց՝ դժբախտ ու փոթորկահույզ հոգիներին, և առաջնորդիր նրանց: Քոնն են ուղիները բոլոր: Ե՛վ փրկիր նրանց քո ընտրած ուղիներով: Դու ես սերը, դու ուրախություն ևս կուղարկես բոլորին...»<sup>10</sup>:

Որոշ ստեղծագործություններում /«Դևերը»՝ «Կարամազով եղբայրներ»/ Դոստոևսկին առաջ է քաշում այն գաղափարը, որ միայն կրոնն ու հավատն են պատվար ծառայում հասարակական բարոյականության համար, և այդ գաղափարի հետ կապված՝ խղճի հասկացությունն ստանում է կրոնական բովանդակություն, խիղճը դառնում է Աստծո կամքի, «Բրիստոսի օրենքի» արտահայտություն: Դոստոևսկին ձգտում է ապացուցել, որ ժողովուրդը, ժխտելով Աստծուն, կրոնական բարոյականությունը, ինքնակալական Ռուսաս-

<sup>9</sup> Ա. Չոպանյան, Երկեր, Ե., «Սովկուսական գրող», 1988 թ., էջ 317:

<sup>10</sup> Ֆ. Մ. Դոստոևսկի, Կարամազով եղբայրներ, հ. I, Ե., «Սովկուսական գրող», 1983 թ., էջ 230:

տանի ողջ հասարակական կարգը, ի վիճակի չի լինի տնօրինելու իր ազատությունը և կհայտնվի «բոլորի պայքարը բոլորի դեմ» անողորմ կացության առջև: Եթե նույնիսկ մեր օրերում հասարակությունն ինչ-որ բան պաշտպանում է, անգամ հանցագործին է ուղղում օրերում հասարակությունն ինչ-որ բան պաշտպանում է, անգամ հանցագործին է ուղղում և դարձնում ուրիշ մարդ, ապա դա նորից քրիստոնեական վարդապետության շնորհիվ է՝ հաստատված սեփական խղճի գիտակցությամբ, - ասում է Դոստոևսկին: Իր դատողությամբ հաստատված սեփական խղճի գիտակցությամբ, - ասում է Դոստոևսկին: Իր դատողությամբ հաստատված սեփական խղճի գիտակցությամբ, - ասում է Դոստոևսկին: Իր դատողությամբ հաստատված սեփական խղճի գիտակցությամբ, - ասում է Դոստոևսկին: «...Եթե չլիներ մեր յունները գրողն արտահայտում է նաև վաճառական Զոսիմայի խոսքերով. «...Եթե չլիներ մեր առաջ թանկագին պատկերը Քրիստոսի, ապա բոլորովին կմոլորվեինք ու կկործանվեինք իսպառ, ինչպես մարդկային ցեղը ջրհեղեղից առաջ»<sup>11</sup>:

Ինչպես մշվել է, Նարեկացու և Դոստոևսկու բողոքն ու դժգոհությունը զալիս է ոչ միայն աշխարհի անկատարությունից, այլև կյանքի և մարդու հանդեպ տաժաժ սիրուց: «Նարեկացին կսիրե կյանքը», - ասում էր Լևոն Օսմաթը և ավելացնում, որ նա «խորունկ կարոտն ու որոնումը ունի կյանքի», որոնցից էլ ծնվում են նրա աղոթք-երգերը:

Կյանքի հանդեպ ունեցած ջերմ սերը բանաստեղծին մղում է դեպի հույսի ու հավատի գորավոր հանգրվանները, և նա գտնում էր, որ մեղքերից ազատվելու համար հարկավոր է ոչ միայն զղջալ, այլև «հավատքի շինվածքը կառուցել», հույսի և սիրո կապերով կապվել Աստծո հետ: Պատահական չէ, որ նա իր ստեղծագործությունները համարում էր «հույսի և հավատի ապավեն», «կենաց դեղ», «փրկության հույս»:

Այսպիսով, ինչպես Նարեկացին, Դոստոևսկին ևս հաստատում է, որ մարդկային կեցության և մարդու բարոյական կեցության սահմանները նույնն են և, անկախ մեծ, համամարդկային իդեալներից, մարդ մնալու միակ պայմանը բարոյական սկզբունքներից հավատարիմ լինելն է, առանց որոնց հասարակական - մարդկային կյանքը ոչնչացման վտանգի տակ կլինի:

Կյանքի աղաղակող անարդարություններով մտահոգված երկու գրողներն էլ մշտապես տենչացել են սոցիալական ու բարոյական համընդհանուր ներդաշնակության, խաղաղության և մարդկային առաքինության: Հենց այդ նպատակին են ծառայում նրանց ամեն ստեղծագործությունները:

<sup>11</sup> Նույնը, էջ 455: